

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ ՄԱՔՍԻՄԻ

ԱՐԱԲ-ԻՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՄԻՆՉԵՎ 21-ՐԴ ԳԱՐԻ ՍԿԻՉԲԸ

Է. 00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետում:

Գլխավորական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր՝
Ռ. Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Ա. Պ. Փոլադյան
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ա.Գ. Ստամբոլյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. հունիսի 27-ին, ժ. 13.00, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. մայիսի 26-ին

Մասնագիտական խորհրդի
գլխավորական քարտուղար՝

Ռ. Դազարյան

ԹԵՄԱՅԻ ԱՐԳԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 21-րդ դարի սկզբին մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցած ռազմաքաղաքական զարգացումները (իրաքյան ճգնաժամը, արաբ-իսրայելյան պատերազմները), կրոնահամայնքային-աշխարհաքաղաքական պայքարի վերածվող շիա-սուննի հակասությունները, Իրանի ատոմային ծրագրի նկատմամբ իրականացվող միջազգային ուժեղ ճնշումը՝ ի թիվս տարածաշրջանային քաղաքական-անվտանգության համակարգի վրա բացասաբար ազդող այլ գործոնների, էապես մեծացրեցին մերձավորարևելյան քաղաքական տարբեր գործընթացների, դրանց իրական շարժառիթների բացահայտման և խորքային հետազոտման գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Այս համատեքստում խիստ հրատապ դարձավ հատկապես արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների գիտական ուսումնասիրման անհրաժեշտությունը, հարաբերություններ, որոնց զարգացման ընթացքն ու ուղղությունը մշտապես էական ներգործություն են ունեցել Մերձավոր Արևելքում քաղաքական մթնոլորտի ձևավորման, այնտեղ ուժային հավասարակշռության պահպանման և ընդհանրապես տարածաշրջանի ռազմավարական նկարագրի կերտման գործում: Պատմությունը վկայում է, որ արաբ-իրանական ճակատում տեղի ունեցող ռազմաքաղաքական փոփոխություններն ու արմատական տեղաշարժերն են մեծապես պայմանավորել միջազգային և միջտարածաշրջանային հարաբերություններում ի հայտ եկած մի շարք իրողություններ, իսկ պատմական որոշ փուլերում՝ նույնիսկ մերձավորարևելյան զարգացումների ողջ ընթացքն ու ուղղությունը:

Ակներև է, որ վերջին տարիներին հենց արաբ-իրանական քաղաքական հարաբերություններից, դրանց զարգացման ընթացքից և հատկապես արաբական աշխարհում Իրանի ռազմավարության ձևափոխումներից է որոշակիորեն կախված եղել մերձավորարևելյան տարածաշրջանի անվտանգությանը սպառնացող ներարաբական մի շարք հիմնախնդիրների (Իրաքում և Լիբանանում ներքաղաքական և կրոնահամայնքային հակասություններ, Համաս-Ֆաթհ ներպաղեստինյան պայքար և այլն) լուծումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արաբ-իրանական հարաբերությունների ոչ խորքային հետազոտումն ու արաբական աշխարհում Թեհրանի քաղաքական անվտանգության շահերի անտեսումն է հենց հանդիսացել ինչպես Պարսից Չոցի շրջանում և մասնավորապես Իրաքում, այնպես էլ լիբանանա-պաղեստինյան ճակատում տևական անկայունության պահպանման հիմնական պատճառներից մեկը:

Այս առումով 1979թ. սկսած արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների հիմնական ուղղությունների ամբողջական և համալիր ուսումնասիրումն ու գիտական ընդհանրացումը, այդ համատեքստում նաև արաբական աշխարհում Իրանի Բիլանական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) զբաղեցրած դերի խորքային լուսաբանումը կարող է հնարավորություն տալ բացահայտելու մերձավորարևելյան քաղաքական մի շարք գործընթացների էությունն ու դրանց զարգացման հիմնական օրինաչափությունները, ընկալելու և համապարփակ պատկերացում կազմելու արաբական տարբեր ճակատներում ընթացող հակամարտությունների ու տարածայնությունների առանցքային պատճառների ու լուծման հեռանկարների մասին:

Արաբ-իրանական հարաբերությունների առանցքային հիմնախնդիրների ուսումնասիրման ու գիտական ընդհանրացման անհրաժեշտությունն ու հրատապությունը առավել ընդգծվում է հատկապես արաբական աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումների ներկայիս պայմաններում, երբ մի կողմից արմատական փոփոխությունների է ենթարկվում մերձավորարևելյան

տարածաշրջանի քաղաքական պատկերը, ինչպես նաև նոր մտեցումներ են ձևավորվում մերձավորարևելյան հակամարտության առանցքային հարցերի լուծման գործում, իսկ մյուս կողմից կտրուկ մեծանում է արաբական գործոնի կարևորությունը Իրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ՝ ուղղակիորեն ստիպելով Թեհրանին առաջնահերթ նշանակություն տալ արաբական երկրների հետ քաղաքական հարաբերությունների զարգացմանն ու անվտանգության մի շարք հարցերի շուրջ արաբ-իրանական համագործակցության ընդլայնմանը:

Նկատի ունենալով, որ մերձավորարևելյան զարգացումների ներկայիս պայմաններում մեր հանրապետության համար նույնպես գնալով մեծանում է տարածաշրջանային գործընթացների էությունը խորապես բացահայտելու և հստակ գնահատելու ռազմավարական կարևորությունը, կարծում ենք, որ արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների համակարգային ուսումնասիրման արդյունքում առաջ քաշված մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել հայկական դիվանագիտության համար՝ առավել խորն ընկալելու մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող ուժային հարաբերակցության փոփոխությունները՝ ինչպես ուժային տարբեր կենտրոնների հետ իր փոխհարաբերությունները համակարգելու, այնպես էլ արաբական հեղափոխական զարգացումների համատեքստում իր պաշտպանական հայեցակարգն առավել արդյունավետ մշակելու նպատակով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ուսումնասիրության հիմնական և առաջնահերթ նպատակն է գիտական ընդհանրացման հիմքի վրա վերջին երեք տասնամյակների մերձավորարևելյան պատմաքաղաքական կարևորագույն զարգացումների համատեքստում բացահայտել արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների զարգացման էվոլյուցիան, արաբական տարբեր «ուժային կենտրոնների» հետ Իրանի հարաբերությունների ձևավորման առանձնահատկություններն ու հիմնական օրինաչափությունները՝ միաժամանակ ուրվագծելով նաև արաբական քաղաքական գործընթացներում Թեհրանի տեղն ու դերը:

Արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների համակարգային ուսումնասիրման համատեքստում առանձնակի կարևորություն է տրվել հատկապես առանցքային այն հարցերին, որոնք կառուցվածքային ներգործություն են ունեցել այդ հարաբերությունների ամբողջ կառուցվածքի, տրամաբանության և զարգացման ընթացքի վրա: Ուստի ատենախոսի ուսումնասիրության շրջանակում չեն ընդգրկվել Իրանի և առանձին արաբական երկրների միջև առկա այն խնդիրները, որոնք համընդհանուր ներգործություն և նշանակություն չեն ունեցել այդ հարաբերությունների, արաբական աշխարհում Իրանի քաղաքական ռազմավարության ձևավորումների վրա:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել խոմեյնիզմի՝ որպես նոր կրոնազաղափարական համակարգի, ներգործությունը Իրանի արտաքին քաղաքական ռազմավարության ձևավորման և մշակման վրա, այդ նոր կրոնաքաղաքական հայեցակարգի հիման վրա բացահայտել Թեհրանի որդեգրած նոր արաբական քաղաքականությունը, դրա գաղափարական հենքը և իրականացման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Յույց տալ շիական գործոնի դերը Իրանի արաբական ռազմավարության մեջ:

- Բացահայտել 1980-ական թթ. արաբ-իրանական հարաբերությունների ձևավորման և զարգացման օրինաչափությունները, պարզաբանել իրանա-իրաքյան պատերազմի ազդեցությունն այդ հարաբերությունների ընթացքի վրա: Յույց տալ

1980-ական թթ. Պարսից Ծոցում Իրանի որդեգրած քաղաքականության առանձնահատկությունները, ուսումնասիրել Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի հետ Թեհրանի հարաբերությունները:

- Ուսումնասիրել 1980-ական թթ. սիրիա-իրանական առանցքի հիմնական էությունը, դաշինքի ստեղծման վրա ազդող առանցքային գործոնները, որոշել այդ առանցքի տեղն ու դերն արաբ-իրանական հարաբերությունների քաղաքական համակարգում:

- Որոշել պաղեստինյան և լիբանանյան գործոնների տեղն Իրանի գաղափարաքաղաքական հայեցակարգում, բացահայտել արաբ-խարայեյան հակամարտության նկատմամբ Թեհրանի ռազմավարության ընդհանուր գծերը:

- Ուսումնասիրել հետպատերազմյան Իրանի արաբական քաղաքականության առանձնահատկությունները, ցույց տալ Իրանի քաղաքականությունը 1990-ականների սկզբին արաբական կարևորագույն զարգացումներում՝ Ծոցի Երկրորդ ճգնաժամի և մերձավորարևելյան խաղաղության գործընթացում, բացահայտել հետճգնաժամյան տարիներին արաբ-իրանական հարաբերությունների վրա ազդող հիմնական գործոնները:

- Վերջին տասնամյակում Մերձավոր Արևելքում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում վեր հանել Իրանի արաբական քաղաքականության էությունը, ցույց տալ արաբ-իրանական հարաբերությունների զարգացման վրա ազդող առանցքային գործոնները, պարզաբանել Իրանի խաղացած դերն արաբական աշխարհում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Աշխատությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով, կառուցվածքային-մեթոդաբանական մոտեցումներով առաջին համալիր ուսումնասիրությունն է հայրենական արևելագիտության մեջ, որը գիտական ընդհանրացման հիմքի վրա բացահայտում է 1979թ. սկսած Իրանի արաբական քաղաքականության ձևավորման գլխավոր առանձնահատկություններն ու արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների զարգացման հիմնական օրինաչափությունները:

Աշխատության գիտական կարևոր նորություններից է այն, որ առաջին անգամ արաբ-իրանական քաղաքական հարաբերությունները դիտարկվել են որպես մեկ ամբողջական և միասնական համակարգ, և առանցքային հիմնահարցերը ուսումնասիրվել են մեկ ընդհանուր համակարգում՝ միմյանց վրա փոխազդող մի շարք գործոնների սերտ շաղկապվածության համատեքստում: Նման մոտեցումը հնարավորություն է տվել համակողմանիորեն և նորովի ուրվագծել Թեհրանի մշակած արաբական հայեցակարգը, բացահայտել դրանում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև մերձավորարևելյան տարածաշրջանում միմյանց հետ փոխկապակցված մի շարք խնդիրներ դիտարկել պատմաքաղաքական զարգացումների առավել լայն համատեքստում:

ԱՏԵՆԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Աշխատության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1979թ.-ից (երբ Իրանի Իսլամական Հեղափոխության արդյունքում ստեղծվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը, և ձևավորվեց երկրի նոր արտաքին քաղաքական հայեցակարգը) մինչև 21-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը: Ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է Իրանի Իսլամական Հեղափոխության արդյունքում Իրանի տարածաշրջանային քաղաքականության ձևավորումներով և արաբական աշխարհում ի հայտ եկած նոր իրողություններով, որոնք մեծ

ազդեցություն ունեցան արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների համակարգի ձևավորման վրա:

Ժամանակագրական նման սահմանների կիրառումը թույլ է տալիս արաբ-իրանական քաղաքական հարաբերություններն ուսումնասիրել երեք տասնամյակի ընթացքում՝ հնարավորություն տալով ոչ միայն բացահայտել դրանց զարգացման հիմնական փուլերը և յուրաքանչյուր փուլում այդ փոխհարաբերությունների վրա ազդող հիմնական գործոնները, այլև ամբողջական և համապարփակ պատկերացում կազմել արաբական աշխարհում Թեհրանի խաղացած դերի մասին:

ԱՇԽԱՏԱՌԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Աշխատության մեթոդաբանական հիմքում ընկած են արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների, դրանց ընթացքի և այն պայմանավորող գործոնների հետ կապված տարբեր հարցադրումների և տեսակետների վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրական ուսումնասիրությունը: Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմք հանդիսացող գիտական օբյեկտիվության, պատմահամեմատական և պատմավերլուծական սկզբունքները, գիտական ընդհանրացման, կառուցվածքային-ֆունկցիոնալ և համակարգային մեթոդները հնարավորություն են տվել հեղինակին գիտական ընդհանրացման հիմքի վրա ատենախոսության մեջ արձածված խնդիրները դիտարկել ոչ թե առանձնացված, այլ տարածաժամանակային համընդհանուր միասնական կայի մեջ:

Հետազոտության համար մեթոդաբանական կարևոր դեր են խաղացել նաև աշխարհաքաղաքական տարբեր տեսությունների հայեցակարգային դրույթները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքի կիրառական նշանակությունը պայմանավորված է դրանում ուսումնասիրվող պատմաքաղաքական մի շարք խնդիրների արդիականությանը: Աշխատանքը կարող է օգտագործվել Մերձավոր Արևելքի պատմության, միջազգային հարաբերությունների, աշխարհաքաղաքական տարբեր հետազոտությունների, միջպետական հարաբերություններին առնչվող քաղաքագիտական ուսումնասիրությունների իրականացման համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն ինչպես Իրանի, այնպես էլ արաբական երկրների հետ կապերի զարգացումն ու ամրապնդումը, ուստի այս տեսանկյունից աշխատության մեջ առաջ քաշվող հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել վերոնշյալ երկրների տարածաշրջանային քաղաքականության ամբողջական ընկալման և գնահատման համար՝ նպաստելով ՀՀ մերձավորարևելյան քաղաքականության հետագա մշակմանն ու առավել արդյունավետ իրականացմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը հաստատվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Արաբագիտության ամբիոնի նիստում:

Աշխատանքի հիմնական դրույթները ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում, ինչպես մաս Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցած հանրապետական երիտասարդական գիտաժողովում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ուսումնասիրությունը կատարվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն և պարսկերեն տարաբնույթ աղբյուրների և հետազոտությունների հիման

վրա: Հետազոտությանը մեծապես նպաստել են պաշտոնական հրապարակումները, Խոմեյնիի ելույթները ներառող աշխատությունները, որոնցում անգլերեն թարգմանությամբ զետեղված են Խոմեյնիի կարդացած այն դասախոսությունները, որոնք ժամանակին արձանագրվել և պահպանվել են նրա աշակերտների կողմից: Լայնորեն օգտագործվել են նաև մի շարք պարբերականներում տեղ գտած արաբ և իրանցի քաղաքական գործիչների հայտարարությունները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոնշյալ թեմային նվիրված աշխատություններն ու հոդվածները:

Ատենախոսության մեջ բարձրացվող մի շարք հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են հայ արևելագետներ Ն. Հովհաննիսյանի¹, Վ. Բայբուրդյանի², Ռ. Կարապետյանի³, Շ. Կարամանուկյանի⁴ և այլոց մենագրություններն ու հոդվածները, որոնք օգնել են ատենախոսին առավել հստակ պատկերացում կազմելու արաբ-իրանական հարաբերությունների առանձին հիմնախնդիրների, ինչպես նաև մերձավորարևելյան զարգացումների ընդհանուր օրինաչափությունների մասին:

Հետազոտության համար կարևոր են եղել նաև 20-րդ դարի երկրորդ կեսի Իրանի պատմությանը, երկրի արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև արաբ-իրանական հարաբերությունների տարբեր ասպեկտների ուսումնասիրմանը նվիրված Ս. Ագակի⁵, Ա. Ալիևի⁶, Լ. Ավդեևի⁷ Վ.Ուշակովի⁸, Շ. Նիյազմատովի⁹, Ե. Դորոշենկոյի¹⁰ աշխատությունները, որոնք հեղինակին մեծապես օգնել են Իրանի արաբական քաղաքականության վրա խոմեյնիզմի քաղաքական գաղափարախոսության ունեցած ազդեցության, ինչպես նաև արաբական աշխարհում Իրանի որդեգրած արտաքին քաղաքական հայեցակարգի մշակման և հարակից այլ հարցերի պարզաբանման հարցում:

Վերջին երկու տասնամյակների Իրանի մերձավորարևելյան քաղաքականության մշակմանը, արաբ-իրանական հարաբերությունների էվոլյուցիոն զարգացման հիմնական առանձնահատկությունների բացահայտմանն են նվիրված անվանի իրանագետ Ն. Մամեդովայի հիմնարար հետազոտություններն ու մենագրությունները¹¹:

Արաբ-իրանական հարաբերությունների համակարգային վերլուծությանը, Իրանի արտաքին քաղաքականության և արաբ-իրանական առանձին հիմնախնդիրների

¹ Հովհաննիսյան Ն., Իրան. Այբբուլյահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, 3-րդ հատոր, Երևան, 2006, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, 4-րդ հատոր, Երևան, 2007:

² Բայբուրդյան Վ., Իրանն այսօր (Տեղեկատու), Երևան, 1999, Բայբուրդյան Վ., Իրանի Պատմություն, Երևան, 2005:

³ Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996թթ.), Երևան, 2000, Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, Կարապետյան Ռ., Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելյան հակամարտությունում (1946-2000թթ.), Կահիրեի Համալսարանի Հայագիտական Կենտրոն, Կահիրե 2008:

⁴ Կարամանուկյան Շ., Արաբական պետությունների լիզայի դերն արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988:

⁵ Агаев С.Л., Иран: рождение республики, М. 1984.

⁶ Алиев А., Иран -Ирак: История и современность, М. 2002.

⁷ Авдеева Л. Е., Иранская революция 1978-1979: Причины и уроки., М. 1989.

⁸ Ушаков В.А., Иран и мусульманский мир 1979-1998, М. 1999.

⁹ Ниязатов Ш. А., Ирано-иракский конфликт, М. 1989.

¹⁰ Дорошенко Е. А., Шиитское духовенство в современном Иране, М. 1985.

¹¹ Мамедова Н. М., Иран: Ислам и власть, ИВ РАН, М. 2001, Мамедова Н. М., Исламская Республика Иран: в 90-е годы (экономика, политика, культура), ИВ РАН, М. 1998, Мамедова Н. М., Иран и исламские страны, ИВ РАН, М. 2009.

ուսումնասիրությանն են նվիրված իրանագետներ Ռ. Ռամազանի¹², Ն. Քեդդի¹³, Գ. Սենաշրի¹⁴ Ա. Էհթեշամի¹⁵, Հ. Ամիրահմադիի և Ն. Էնթեսարի¹⁶ աշխատությունները:

Միրիա-իրանական դաշինքի հիմնական առանձնահատկությունների ուսումնասիրման ու Լևանտում Թեհրանի քաղաքականության էության քացահայտման համար առենախոսն օգտագործել է անվանի հետազոտողներ Ջ. Գոդարզի¹⁷, Հ. Ագհայի ու Ա. Խալիդի¹⁸ Հ. Չեհարի¹⁹ աշխատությունները: Իսկ Պարսից Տոցի արաբական երկրների հետ Իրանի փոխհարաբերությունների խորքային վերլուծությանը և լուսաբանմանը նվիրված Ք. Մարշալի²⁰, Գ. Սուայիդի²¹, Ջ. Քեչիչյանի²², Գ. Հիրոյի²³ և այլոց հետազոտությունները հնարավորություն են տվել հեղինակին առավել ամբողջական ընկալել իրանա-իրաքյան և իրանա-սաուդյան հարաբերությունները և ընդհանրապես հետևել Տոցում ԻԻՀ որդեգրած քաղաքականության էվոլյուցիոն ընթացքին:

Իրան նկատմամբ արաբական երկրների որդեգրած դիրքորոշման, արաբ-իրանական հարաբերությունների մի շարք առանձնահատկությունների ուսումնասիրման գործում հեղինակին օգնել են արաբ հետազոտողներ Իբրահիմ Դեսաուկի-Շետայի, Ջամալ Կասեմի և այլոց աշխատությունները, որտեղ չնայած որոշ վերապահ մտտեցումներին, ընդհանուր առմամբ մանրամասն հետազոտվում են 1980-ականներին հեղափոխական Իրանի նկատմամբ արաբական երկրների քաղաքականության ձևավորման ընթացքը և դրանց վրա ազդող կարևորագույն գործոնները:

¹² Ramazani R. K., *Revolutionary Iran: Challenge and Response in the Middle East*, Baltimore: Johns Hopkins University Press, Ramazani R. K., *The Shifting Premise of Iran's Foreign Policy: towards a Democratic Peace?*, Middle East Journal, vol. 52, no. 2, Spring 1998, Ramazani R. K., *The Emerging Arab-Iranian Rapprochement: towards an Integrated U.S. Policy in the Middle East?*, Middle East Policy, Vol. VI, No. 1, June 1998.

¹³ Keddie, Niiky R. and Mathee, Rudi's ed. "Iran and the surrounding world: interactions in culture and cultural politics" University of Washington Press, 2002 Keddie N and Hooglund E., *The Iranian Revolution and the Islamic Republic*, Syracuse University Press, 1986.

¹⁴ Menashri D., *The Iranian Revolution and the Muslim World*, Boulder: Westview Press, 1990.

¹⁵ Ehteshami A., *After Khomeini: The Iranian Second Republic*, London 1995, Ehteshami A. and Hinebusch R., *Syria and Iran: Middle Powers in a Penetrated Regional System*, London: Routledge, 1997.

¹⁶ Amirahmadi H., *Small Islands, Big Politics: The Tonbs and Abu Musa in the Persian Gulf*, St. Martin's Press: New York 1996, Amirahmadi H. and Entessar N., *Reconstruction and Regional Diplomacy in the Persian Gulf*, New York, 1992, Amirahmadi H. and Entessar N., *Iran and the Arab World*, St. Martin's Press, N.Y., 1993.

¹⁷ Goodarzi J., *Syria and Iran: Diplomatic Alliance and Power Politics in the Middle East*. London: Tauris Academic, 2006.

¹⁸ Hussein J. Agha and Ahmad S. Khalidi, *Syria and Iran: Rivalry and Cooperation*, London, 1995.

¹⁹ Chehabi H. E., *Distant relations: Iran and Lebanon in the last 500 years*, London, 2006.

²⁰ Marschall C., *Iran's Persian Gulf Policy: From Khomeini to Khatami*, New York, 2003.

²¹ Al-Suwaidi J. S., *Iran and the Gulf: A search for Stability*, Abu Dhabi: The Emirates Center for Strategic Studies and Research, 1996.

²² Joseph A. Kechichian, *Iran, Iraq and the Arab Gulf States*, Los Angeles: University of California, 2001.

²³ Hiro D. *The Longest War: The Iran-Iraq Military Conflict*, New York, 1990.

Հետազոտական աշխատանքի ընթացքում Իրանի և առաջատար արաբական երկրների վարած տարածաշրջանային քաղաքականության էության բացահայտման և արաբ-իրանական հարաբերությունների հայեցակարգային ընդհանուր շրջանակի մշակման գործում հեղինակի համար մեթոդաբանական կարևոր ուղեցույց են հանդիսացել ինչպես Հինմեքուշի ու Էհթեշամիի²⁴, այնպես էլ միջազգայնագետ Ջ. Նոնեմանի²⁵ հիմնարար ուսումնասիրությունները, որոնք նվիրված են աշխարհաքաղաքական տարբեր տեսությունների համատեքստում մերձավորարևելյան երկրների արտաքին քաղաքականության համակողմանի և ամբողջական ուսումնասիրմանը, դրանց վրա ազդող ներքին և արտաքին տարբեր գործոնների, երկրի արտաքին քաղաքական ռազմավարության և ներքին քաղաքականության միջև առկա կապերի բացահայտմանը և այլն:

Հեղինակին հատկապես օգտակար են եղել 1998թ. Բեյրութում հրատարակված «Արաբ-իրանական հարաբերություններ» հոդվածների ժողովածուն²⁶, որտեղ գետնոված են 1995թ. սեպտեմբերի 11-14-ին Կատարում տեղի ունեցած «Արաբ-իրանական հարաբերություններ. Ժամանակակից միտումներ և ապագայի հեռանկարներ» խորագրով գիտաժողովին արաբ և իրանցի մի շարք անվանի հետազոտողների ներկայացրած գեկուցումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ:
Ատենախոսությունը բաղկացացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը և քաղաքական ու պատմագիտական հրատապությունը, սահմանված են աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ *«Իրանի մերձավորարևելյան նոր հայեցակարգը և արաբական երկրները (1979-1980թթ.)»*, բաժանվում է մի քանի ենթագլուխների:

Առաջին ենթագլխում ուսումնասիրվում են Իսլամական Հեղափոխությունից հետո Իրանի մերձավորարևելյան նոր քաղաքականության մշակման հիմնական առանձնահատկությունները, լուսաբանվում է Իրանի արտաքին քաղաքականության իրականացման վրա Խոմեյնիզմի գաղափարաքաղաքական դրույթների ազդեցությունը:

Երկրի պետական կառուցվածքի հիմքում դնելով կառավարման «վելյաթ-է ֆադիխ» /կրոնագետների իշխանություն/ համակարգը և փաստորեն միավորելով երկրի կրոնական և քաղաքական իշխանությունը՝ 1979թ. Իրանում իշխանության եկած շիա հոգևորականությունը Խոմեյնիի գլխավորությամբ հիմնովին վերանայման ենթարկեցին Իրանի արտաքին ռազմավարության հիմնական սկզբունքները: Որպես երկրի զարգացման միակ ճանապարհ առաջ քաշելով «ֆալամական» ուղին և դրանով իսկ հակադրելով պանիսլամական գաղափարախոսությունը պանարաբականին՝ երկրի շիա դեկավարությունը Իրանին սկսեց դիտարկել որպես «նմանակման մոդել» արաբական երկրների համար և ջանքեր գործադրել

²⁴ Hinnebusch R. and Ehteshami A., The Foreign Policies of Middle East States, Boulder, 2002.

²⁵ Nonneman G., Analyzing Middle East Foreign Policies and the Relationship with Europe, Routledge: London and New York, 2005.

²⁶ Haseeb K., Arab-Iranian Relations, Centre for Arab Unity Studies, Beirut, 1998.

հեղափոխությունը արաբական աշխարհում տարածելու ուղղությամբ: Այս առումով հեղինակն այն եզրահանգման է գալիս, որ Խոմենյնի առաջ քաշած գաղափարաբանական դրույթները առանցքային նշանակություն ունեցան արաբ-իրանական նոր հայեցակարգի ձևավորման վրա՝ նկատի ունենալով, որ հենց իսլամական հեղափոխության արտահանման հիմնադրույթն ու պանիսլամական շիա-կրոնաքաղաքական հայացքների վրա խարսխված Խոմենյնի մշակված սկզբունքները տեսական հիմքի վրա ձևավորեցին ընդհանուր գաղափարական մի հարթակ, որի հիման վրա սկսեց մշակվել և վերածևավորվել հեղափոխական Իրանի արաբական քաղաքականությունը:

Հաջորդ ենթագլխում՝ «Պաղեստինյան խնդիրը որպես արաբ-իրանական հարաբերությունների հենքային քաղաքական», հեղինակն առաջնահերթ կարևորություն է տվել ինչպես խոմենյնիզմի գաղափարաքաղաքական հայեցակարգում պաղեստինյան հիմնախնդրի դերի ուսումնասիրմանն ու Իրանի պաղեստինամետ քաղաքականության ձևավորմանը, այնպես էլ իրանա-արաբական փոխհարաբերություններում պաղեստինյան գործոնի դերի բացահայտմանը: Հեղինակն այն տեսակետն է առաջ քաշում, որ Պաղեստինի ազատագրման հիմնախնդրին Իրանի արտաքին քաղաքական օրակարգում առաջնահերթ տեղ հատկացնելու միջոցով Խոմենյնի նպատակ էր հետապնդում նախ մի կողմից առավել «մոտենալ» սուննի արաբական աշխարհին և որոշակիորեն հարթել արաբ-իրանական փոխհարաբերություններն ավանդաբար սրող էթնիկական /արաբ-պարսկական/ և կրոնական /սուննի-շիա/ հակասությունները, իսկ մյուս կողմից «պաղեստինյան հիմնախնդիրը» և այդ համատեքստում Իսրայելի դեմ դիմադրողական պայքարը, ներկայացնելով որպես իսլամական շարժման առաջնահերթ խնդիր, օգտագործել սուննի արաբական աշխարհում իրանական ազդեցությունն ու հեղինակությունը մեծացնելու և դրա միջոցով արաբների շրջանում խոմենյնիզմի պանիսլամական գաղափարախոսությունը տարածելու համար: Այս առումով հարկ է ընդգծել, որ Պաղեստինը որպես պատմամշակութային, կրոնագաղափարական և խորհրդանշական տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող տարածք, առանցքային տեղ էր գրավում Խոմենյնի աշխարհայացքում, որտեղ Իսրայելի ջախջախումն ու Երուսաղեմի ազատագրումը ուղղակիորեն շաղկապված էին Իրանի առաջնորդությամբ «համաշխարհային մուսուլմանական համայնք» ստեղծելու գաղափարի հետ:

Առաջին գլխի հաջորդ երեք ենթագլուխներում՝ «Իրանա-եգիպտական հարաբերությունների սրումն ու երկբևեռ Մերձավոր Արևելքի ձևավորումը», «Իրանա-իրաքյան հակասությունների խորացումը» և «Իրանի հեղափոխական շիա-իսլամական մարտահրավերներն ու Ճոզի արաբական միապետությունները», համակարգային վերլուծության են ենթարկվում այն հիմնական գործոնները, որոնք զգալի ներգործություն ունեցան մի կողմից Թեհրանի, իսկ մյուս կողմից՝ Եգիպտոսի, Իրաքի և Ճոզի արաբական միապետությունների միջև արմատական հակասությունների ձևավորման գործում:

Եթե Սադատի կողմից 1979թ. սկզբներին Եգիպտոսում Իրանի նախկին շահին քաղաքական ապաստան տրամադրելը, Քեմփ-Ղևկոյի համաձայնագրի շրջանակներում եգիպտա-իրաքյեյան հաշտության պայմանագրի ստորագրումը և Կահիրեի պրոաներիկյան դիրքորոշումը այն հիմնական պատճառներն էին, որոնք ձևավորեցին իրանա-եգիպտական հակասությունների հանգույցը, ապա «իսլամական հեղափոխության արտահանման» ուսմունքի վրա խարսխված Իրանի տարածաշրջանային նոր քաղաքականությունը, Ճոզի շրջանում շիա-իսլամական ուժերի միջոցով արաբական միապետություններն ապակայունացնելու Թեհրանի

փորձերը ուղղակիորեն հանգեցրին իրանա-իրաքյան և իրանա-սաուդյան հարաբերությունների սրմանը:

Իր գաղափարական պահանջներով ու քաղաքական հավակնություններով հեղափոխական Իրանը, անշուշտ, լրջագույն մարտահրավեր էր իրենից ներկայացնում Պարսից Տոցի արաբական երկրների համար: Մի կողմից նորաստեղծ հանրապետության պամիլիամական հայացքները ուղղակիորեն հակասում էին իրաքյան իշխող բասական վարչակարգի պանարաբական գաղափարներին, իսկ մյուս կողմից հանրապետական վարչակարգի սկզբունքի վրա խարսխված հասարակության վերակառուցման «իրանական մոդելը» հակադրվում էր Տոցի երկրների քաղաքական կառուցվածքի հիմքում դրված միապետական համակարգին: Տոցի շրջանում մեծաթիվ շիա բնակչության առկայության փաստն իր հերթին առավել մեծացնում էր շիական գործոնի միջոցով իշխող սուննի արաբական վարչակարգերը տասպալելու Թեհրանի հնարավորությունները: Թեհրանի կողմից հակակառավարական շարժումների հրահրման և ծայրահեղական իսլամական ուժերի ակտիվացմանն ուղղված քայլերը, ինչպես նաև Տոցի երկրներում իրանական շիական հեղափոխությունը տարածելու վերջինիս քաղաքականությունը, կարելի է համարել այն հիմնական պատճառները, որոնք նպաստեցին 1979-1980թթ. Տոցի արաբական քաղաքական դեկավարության շրջանում հակաիրանական տրամադրությունների կտրուկ աճին:

- Աշխատության առաջին գլխի հաջորդ երկու ենթագլուխներում՝ *«Միրիա-իրանական առանցքի ձևավորումը»* և *«Շիական գործոնը և Իրանի լիբանանյան քաղաքականությունը»*, հեղինակը խորամուխ է եղել ինչպես սիրիա-իրանական դաշնակցային հարաբերությունների ձևավորման, այնպես էլ Լիբանանում հեղափոխական Իրանի քաղաքականության հիմնական առանձնահատկությունների համակարգային ուսումնասիրմանը: Իրաքի և Տոցի միապետությունների որդեգրած հակաիրանական քարոզչության պայմաններում Միրիայի ընդգծված իրանամետ դիրքորոշումը և տարածաշրջանում 1979թ.-ից սկզբնավորված Թեհրան-Իսլամական ռազմավարական համագործակցության ձևավորումը հեղինակը ուղղակիորեն կապում է արտաքին և ներքին մի շարք գործոնների հետ՝ ինչպես կողմերի հակարևոտյան և հակախրայեյլան քաղաքականությամբ, իրաքյան վտանգը չեզոքացնելու և Լիբանանում իսրայելա-ամերիկյան ազդեցության մեծացումը կանխելու նրանց ընդհանուր շահագրգռվածությամբ, այնպես էլ իրենց տարածաշրջանային մեկուսացման վտանգը հաղթահարելու և սեփական երկրներում ներքաղաքական մարտահրավերները չեզոքացնելու հանգամանքներով:

Այս առումով հեղինակը լիովին համամիտ է այն հետազոտողների հետ /Ջ. Գոլարգի, Մ. Ստոգ/, որոնք սիրիա-իրանական դաշինքը դիտարկում են աշխարհաքաղաքական մտքի «ռեալպոլիտիկի» տեսության համատեքստում, որի համաձայն դաշինքները ստեղծվում են ընդհանուր շահերի և նպատակների հիման վրա և հավասարակշռության ստեղծման թելադրանքով, մինչդեռ պետության ներքին յուրահատկությունները, ինչպիսիք են գաղափարախոսությունը կամ քաղաքական համակարգի տեսակը, դաշինքների ձևավորման վրա առավել քիչ են ազդում: Ուստի, թեև իր պանարաբական և ազգայնական գաղափարախոսությամբ և զարգացման աշխարհիկ բուրժուա-դեմոկրատական ուղղվածությամբ Միրիան ուղղակիորեն հակասում էր երկրի զարգացման իսլամական ճանապարհը ենթադրող իրանական հայեցակարգին, այնուամենայնիվ վերոնշյալ տարբերակիչ գործոնները խոչընդոտ չհանդիսացան երկկողմ հարաբերությունների զարգացման համար:

Հեղինակը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նաև Իրանի լիբանանյան քաղաքականության ուսումնասիրմանը՝ նկատի ունենալով, որ Լիբանանն իր

մեծաքիվ շիա բնակչությանը առանձնահատուկ տեղ է զբաղեցրել Իրանի «իսլամական հեղափոխության արտահանման» ռազմաքաղաքական հայեցակարգի շրջանակներում: Այս համատեքստում ներկայացվել են այն գործոնները, որոնք մեծապես նպաստեցին Լիբանանում իրանական ազդեցության մեծացմանը: Այս առումով հեղինակը կարևորում է դեռևս նախահեղափոխական շրջանում Նաջաֆում Իրանի շիա հոգևորականության և Լիբանանի շիա առաջնորդների միջև կրոնամշակութային սերտ կապերի զարգացումը, 1970-1979թթ. Լիբանանում ձևավորված հակաշահական հզոր շարժման պայմաններում նրանց համագործակցությունը, որոնք մեծ դեր խաղացին Խոմեյնիի և Լիբանանի շիա ազդեցիկ դեմքերի միջև ընդհանուր գաղափարական հայացքների ձևավորման, անձնական և համայնքային կապերի ամրապնդման և կրոնաքաղաքական ցանցի ստեղծման համար:

Հեղինակը գտնում է, որ քաղաքացիական պատերազմի պայմաններում Լիբանանի շիական համայնքում առավել արմատական տարրերի ամրապնդումը, իսլամական ուժերի ակտիվացումն ու շիաների համայնքային ինքնագիտակցության բարձրացումը հող նախապատրաստեցին Լիբանանի շիական դաշտում Իրանի հեղափոխական գաղափարախոսության, Խոմեյնիի կրոնաքաղաքական հայացքների և պատգամների տարածման համար, որի տրամաբանական արդյունքն էլ հանդիսացավ 1982թ. Սիրիայի օգնությամբ Հարավային Լիբանան իրանական ուժերի ներթափանցումն ու «Հզորլսահ» շիա-իսլամական արմատական խմբավորման ստեղծումը:

Երկրորդ գլուխը՝ *«Արաբ-իրանական հարաբերությունների հիմնական առանձնահատկությունների ընդհանրական վերլուծությունը իրանա-իրաքյան պատերազմի համատեքստում (1980-88թթ.)»*, բազմակողմանիորեն վերլուծում է ութամյա պատերազմի ընթացքում արաբ-իրանական փոխհարաբերությունների ընդհանուր դինամիկան, պատերազմի ընթացքում առաջատար արաբական երկրների որդեգրած տարբեր դիրքորոշումները և դրանց վրա ազդող հիմնական գործոնները, փորձ է արվում ընդհանրական կերպով բացահայտել պատերազմի ունեցած ազդեցությունը 1980-ականների արաբ-իրանական հարաբերությունների ամբողջ համակարգի վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ծոցի արաբական երկրները /հատկապես Սաուդյան Արաբիան և Քուվեյթը/ ինչպես նաև Եգիպտոսը, տարածաշրջանում «իրանական իսլամիզմի» սպառնալիքի տակ հիմնականում Բաղդադին էին տեսնում որպես արաբական աշխարհում խոմեյնիզմի գաղափարների տարածումը կանխող հիմնական ուժի, և պատերազմի ընթացքում լայնածավալ ռազմաքաղաքական, ֆինանսական և գաղափարական աջակցություն էին ցուցաբերում Ս.Մուսեյնիին: Իսկ վերջինս, բասասկան քաղաքական գաղափարախոսության պանարաբական հայեցակարգն օգտագործելով Իրաքին արաբական աջակցություն ապահովելու և տարածաշրջանում հակաիրանական արաբական ճակատ ձևավորելու համար՝ փորձում էր Իրանի դեմ պատերազմը ներկայացնել որպես համաարաբական առաքելություն:

Հեղինակը հանգում է այն մտքին, որ 1980-ականների ընթացքում հակաիրանյան ճակատում լայն օժանդակություն ցուցաբերելով Իրաքին՝ Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը, փորձում էին իրանական վտանգն օգտագործել տարածաշրջանում սեփական դիրքերն ամրապնդելու համար: Եթե սաուդյան ղեկավարությունն, ակտիվորեն նախաձեռնելով Ծոցի Համագործակցության Խորհրդի ստեղծումը /այսուհետ՝ ԾՀԽ/, փորձում էր իր հովանու տակ միավորել Ծոցի արաբական միապետություններին և մեծացնել իր կշիռը Պարսից Ծոցի քաղաքական-

անվտանգության համակարգում, ապա Եգիպտոսն իր հերթին փորձում էր պատերազմը ծառայեցնել իր միջարաբական քաղաքականությունն ակտիվացնելու և «արաբական ընտանիք» վերադառնալու նպատակով:

Ատենախոսն, ուսումնասիրելով 1980-ականների սիրիա-իրանական հարաբերությունների դինամիկան, գտնում է, որ չնայած արաբական որոշ ճակատներում /հատկապես Լիբանանում/ ի հայտ եկած Թեհրան-Դամասկոս գաղափարաքաղաքական տարածայնություններին և պրոփրաբյան ճակատի կողմից Հաֆեզ Ասադի վրա իրականացվող քաղաքական ճնշումներին՝ տարածաշրջանում Իրաքի ռազմաքաղաքական հավակնությունները կանխելու, Իսրայելի նկատմամբ տարածաշրջանային ռազմավարական հակակշիռ տեղեղծելու, Լիբանանում իրենց քաղաքականությունը համակարգելու սիրիա-իրանական ընդհանուր ռազմավարական շահերը շարունակում էին հիմքեր ստեղծել 1980-ականներին երկկողմ դաշինքի պահպանման և ամրապնդման համար:

Սույն ենթագլխում ուսումնասիրվում են նաև այն պատճառները, որոնք լուրջ խոչընդոտ հանդիսացան արաբական աշխարհում իրանական հեղափոխական գաղափարների տարածման համար: Այդ պատճառների շարքում հեղինակի դիտարկմամբ առավել կարևորներն էին ինչպես Իրաքի և Ծոցի արաբական երկրների սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները, տեղի շիա բնակչության շրջանում դեռևս ուժեղ արաբական ազգայնական դրսևորումները, Իրանի շիա-պարսկական ինքնությունն ու իրանական իսլամական գաղափարների «ոչ արաբական» ծագումը, ինչպես նաև 1980-ականն թթ. սկզբին Ծոցի արաբական վարչակարգերի կողմից սեփական շիա բնակչության սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակի բարելավմանն ուղղված ակտիվ քայլերը:

Երրորդ գլուխը՝ *«Արաբ-իրանական հարաբերությունների առանցքային հիմնահարցերը հետպատերազմյան շրջանում»*, իր հերթին բաժանվում է հինգ ենթագլխի:

Առաջին ենթագլխում՝ *«Հետպատերազմյան Իրանի նոր արտաքին քաղաքականությունը Ծոցի շրջանում և սիրիա-լիբանանյան ճակատում Ծոցի երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում /1988-1990թթ.»*, վերլուծության են ենթարկվում իրանա-իրաքյան պատերազմից հետո Թեհրանի արաբական քաղաքականության մեջ տեղի ունեցած շրջադարձային փոփոխությունները, դրանք պայմանավորող հիմնական գործոններն ու առանցքային դրդապատճառները, ազդեցությունն արաբ-իրանական հարաբերությունների վրա:

Հեղինակի կարծիքով, հետպատերազմյան շրջանում Իրանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, նրա տարածաշրջանային դիրքերի թուլացումը, միջազգային քաղաքական մեկուսացումը, խոմեյնիստական շրջանի արտաքին քաղաքական հաղեցակարգերի կիրառման անարդյունավետությունն այն հիմնական գործոններն էին, որոնք դրդեցին 1989թ. իշխանության եկած Ռաֆասանջանիի վարչակարգին էսպես նահանջել նախորդ տասնամյակում Խոմեյնիի որդեգրած «իսլամական հեղափոխության արտահանման» կուրսից և որդեգրել առավել իրատեսական արաբական քաղաքականություն: Այս համատեքստում Իրանի համար հատկապես կարևորվեց ԾՀԽ-ի անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացումը, որն ատենախոսի կարծիքով պայմանավորված էր հատկապես Ռաֆասանջանիի «տնտեսական վերակառուցման» քաղաքականության հետ, որը բնականաբար ենթադրում էր Ծոցում կայունության ապահովում ու նավթի ազատ հոսքի անխափան ապահովում:

Այս շրջանում սիրիա-իրանական դաշինքի պահպանումը և Իրան-ԾՀԽ փոխհարաբերություններում արձանագրված դրական տեղաշարժերը /Զուվեյթի հետ

դիվանագիտական հարաբերությունների վերականգնում, իրանա-սաուդյան հակամարտության թուլացում, Իրան-ԱՄԷ առևտրատնտեսական կապերի ակտիվացում/ իրենց հերթին պայմանավորված էին նաև «Իրաքյան» գործոնով: Այլ կերպ ասած՝ Ծոցում որպես առաջատար ուժ դառնալու Սադամի հավակնություններն ու տարածաշրջանում Իրաքի ռազմաքաղաքական կշռի զգալի մեծացումն էին, որ դրանում էին արաբական երկրներին որոշակիորեն ձևափոխել Թեհրանի հետ հարաբերությունները:

1980-ական թթ. վերջերին Լիբանանում գաղափարաքաղաքական մի շարք հարցերում Դամասկոսի հետ որոշակի փոխհամաձայնության գնալու Թեհրանի պատրաստակամությունը, Իրանի կողմից Լիբանանում Սիրիայի գերակայության ընդունումը հեղինակը բացատրում է ինչպես արաբական աշխարհում իր միակ դաշնակցին պահելու Թեհրանի ձգտումներով, այնպես էլ Խոնեյնի մահից հետո Իրանի «վիբանանյան» քաղաքականության մեջ տեղի ունեցած էական տեղաշարժերով, որի արդյունքում Թեհրանը սկսեց աստիճանաբար հետ կանգնել Լիբանանում «խլամական հեղափոխության արտահանման» իր ռազմաքաղաքական ուսմունքի կիրառումից:

Երկրորդ ենթագլխով՝ *«Իրանը և 1990-1991թթ. իրաքա-քուվեյթյան ճգնաժամը»*, ուսումնասիրում է Ծոցի երկրորդ ճգնաժամի ժամանակ Թեհրանի որդեգրած քաղաքականությունը և այդ ամենի ազդեցությունն արաբ-իրանական հարաբերությունների վրա:

Իրաքա-քուվեյթյան ճգնաժամի ընթացքում հանդես գալով ի պաշտպանություն Քուվեյթի ինքիշխանության պահպանման, ինչպես նաև որդեգրելով չեզոք դիրքորոշում՝ Թեհրանն իր ճկուն դիվանագիտության շնորհիվ կարողացավ ոչ միայն որոշ չափով դուրս գալ միջազգային մեկուսացումից, այլև բարելավել հարաբերությունները Ծոցի արաբական երկրների հետ և որոշակիորեն թոթափել լարվածությունը Կահիրեի հետ հարաբերություններում: Իսկ 1991թ. մարտին Էր-Ռիադի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումն իրավմամբ համարվում է Ծոցի երկրորդ ճգնաժամից հետո Ռաֆսանջանի արտաքին քաղաքական գլխավոր հաջողություններից մեկը:

Երրորդ ենթագլխում՝ *«Արաբ-իրանական հարաբերությունների առանցքային հիմնահարցերը 1990-ականների առաջին կեսին»*, փորձ է արվել համակարգային վերլուծության ենթարկել այն հիմնական դրդապատճառները, որոնք 1990-ականների առաջին կեսին սկսեցին լուրջ խոչընդոտ հանդիսանալ արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների զարգացման համար: Այս առումով հեղինակն առանձնացնում է երկու հիմնական գործոն: Առաջինը հետպատերազմյան տարածաշրջանային անվտանգության պահպանման շուրջ ի հայտ եկած արաբ-իրանական տարածայնություններն էին մի կողմից Իրանի, իսկ մյուս կողմից ԾՆԽ-անդամ երկրների և Եգիպտոսի միջև: Դա էր վկայում ինչպես 1991թ. սկզբներին Ծոցի անվտանգության պահպանման «արաբական» հայեցակարգ առաջարկող «Դամասկոսյան Հոչակագիրը», այնպես էլ տարածաշրջանային անվտանգության համաձայնագրերի կնքման ուղղությամբ ԾՆԽ-Վաշինգտոն ակտիվ համագործակցությունը:

Արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների վրա բացասաբար ազդող երկրորդ պատճառը 1992թ. օգոստոսին բռնկված Աբու Մուսայի ճգնաժամն էր: Կողմ վրա ռազմական վերահսկողություն հաստատելու Թեհրանի գործողությունները, ամբողջովին հակասելով Ծոցի երկրորդ պատերազմից հետո Իրանի որդեգրած չափավոր արտաքին քաղաքական հայեցակարգին, կտրուկ սրեցին ոչ միայն Իրան-ԱՄԷ, այլև Իրան-արաբական աշխարհ հարաբերությունները՝ բնականաբար էապես

նվազեցնելով Ճոցի անվտանգության խնդիրների շուրջ Իրան-ՃՀԽ հետագա համագործակցության հավանականությունը:

Չարգացնելով որոշ հետազոտողների /Ք. Մարշալ, Ջ. Կոլարրիզ, Կ. Աֆրասիաբե/ այն միտքը, որի համաձայն տարածաշրջանային անվտանգության համակարգից Թեհրանին մեկուսացնելու ԱՄՆ-ի և արևմտամետ արաբական երկրների քաղաքականությունը և 1990-ականների սկզբին մեծ թափ ստացած արաբ-խարայեյան խաղաղության գործընթացը զգալիորեն նվազեցրին «արաբական գործոնի» կարևորությունը Թեհրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ՝ հեղինակը գտնում է, որ 1990-ականների սկզբին տեղի ունեցավ Իրանի արտաքին քաղաքականության «ապարաբականացում», որը պայմանավորված էր Խորհրդային Միության փլուզումից հետո Իրանի սահմաններին նորանկախ մահմեդական հանրապետությունների ստեղծման և աշխարհաքաղաքական-խլամական նոր տարածության ձևավորման հետ, որը հանդես էր գալիս որպես «այլընտրանք» արաբական-իսլամական առանցքին և դրդում էր Թեհրանին կենտրոնացնել զգալի ռեսուրսներ՝ այնտեղ առաջացած քաղաքական և գաղափարական վակուումը լրացնելու համար:

Չորրորդ ենթագլուխը՝ «Միջիա-իրանական դաշինքը և 1990-ականների խաղաղության գործընթացի ակտիվացումը», բացահայտում է Թեհրանի դիրքորոշումը Ճոցի երկրորդ ճգնաժամից հետո մեծ թափ ստացած մերձավորարևելյան խաղաղության գործընթացի նկատմամբ, վերջինիս ունեցած ակտիվությունը սիրիա-իրանական հարաբերությունների վրա և այն:

Հեղինակը, վերլուծության ենթարկելով 1990-ական թթ. արաբ-խարայեյան բանակցային գործընթացի նկատմամբ Թեհրանի խիստ ընդդիմադիր քաղաքականությունը՝ գտնում է, որ այդ ամենը ոչ այնքան Խոմեյնիի կրոնագաղափարական ժառանգության և իրանական իսլամական հեղափոխության փիլիսոփայության ազդեցության արդյունք էր, որքան իրանական ղեկավարության պրագմատիկ ռազմավարության ուղղակի դրսևորում: Այստեղ Թեհրանն արաբ-խարայեյան խաղաղության գործընթացը դիտում էր Ճոցի պատերազմից հետո Վաշինգտոնի որդեգրած մերձավորարևելյան նոր քաղաքականության համատեքստում, որը ենթադրում էր, մի կողմից, մերձավորարևելյան նավթի վրա լիակատար վերահսկողության հաստատում, իսկ մյուս կողմից՝ խաղաղություն և անվտանգության հաստատում Իսրայելի և արաբական երկրների միջև:

1990-ականների մերձավորարևելյան բանակցային գործընթացի համատեքստում սիրիա-իրանական հարաբերությունների ուսումնասիրումն իր հերթին ցույց է տալիս, որ չնայած Վաշինգտոնի միջնորդությամբ սիրիա-խարայեյան բանակցությունների ակտիվացումը լիովին հակասում էր հակախարայեյան և հակամահմեդական քաղաքականության վրա խաղիսլամական Թեհրանի արտաքին ռազմավարության փիլիսոփայությանը, այնուամենայնիվ ի տարբերություն պաղեստինա-խարայեյան և հորդանա-խարայեյան ճակատների՝ սիրիա-իրանա-խարայեյան ճակատում Իրանը հանդես էր բերում զգալի ճկունություն: Ատենախոսն այդ ամենը բացատրում է Թեհրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ «սիրիական» գործոնի մեծ կարևորությամբ, հատկապես այն պարագայում, երբ Ասադը շարունակում էր պահպանել Իրանի և Արաբական երկրների միջև միջնորդական-կարգավորիչ դեր խաղալու իր դերակատարումը, ինչը խիստ կարևոր էր հենց 1990-ականների առաջին կեսին, երբ մեծապես լարված էին Իրան-ԱՄԷ և Իրան-Բահրեյն փոխհարաբերությունները:

Երկրորդ գլխի վերջին՝ հինգերորդ ենթագլխում՝ «Մ.Խաթամիի տարածաշրջանային քաղաքականությունը և 1990-ականների վերջին արաբ-

իրանական հարաբերությունների ակտիվացումը», վերլուծության են ենթարկվում այն առանցքային գործոնները, որոնք 1990-ականների կեսերից սկսած հանգեցրին դրական տեղաշարժերի արձանագրմանն արաբ-իրանական ճակատում: Այդ գործոնների շարքում հեղինակն հատկապես առանձնացնում է 1997թ. օգոստոսին Իրանում Մ. Խաթամիի իշխանության գալը, ում արտաքին քաղաքական ռազմավարությունը, խարսխված լինելով «քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքի վրա՝ ենթադրում էր առավել չափավոր արտաքին քաղաքական կուրս և արաբական աշխարհի նկատմամբ լարվածության նվազեցման քաղաքականության որդեգրում: 1997թ. դեկտեմբերին Թեհրանում կազմակերպված Իսլամական Կոնֆերանս կազմակերպության հերթական գագաթնաժողովը կարելի է հենց համարել արաբ-իրանական հարաբերությունների բարելավման ուղղությամբ Խաթամիի վարչակարգի կարևորագույն ձեռքբերումը:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ «ԻԻ-Հ քաղաքականությունն արաբական աշխարհում՝ 21-րդ դարի սկզբի մերձավորարևելյան զարգացումների համատեքստում», կազմված է երեք ենթագլխից: Առաջինը՝ «Իրանը և 2003թ. իրաքյան ճգնաժամը. նոր հնարավորություններ և նոր մարտահրավերներ», ներկայացնում է 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո Վաշինգտոնի որդեգրած մերձավորարևելյան նոր քաղաքականության և դրա արդյունքում տարածաշրջանում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունների ազդեցությունը Թեհրանի տարածաշրջանային քաղաքականության վրա: Փորձ է արվում արաբ-իրանական զարգացումները դիտարկել ԱՄՆ-ի իրաքյան քաղաքականության և դրա արդյունքում՝ հնարավոր ռազմաքաղաքական, տնտեսական և էթնոկրոնական հնարավոր մի շարք մարտահրավերների համատեքստում: Հեղինակն այս փուլում արաբ-իրանական հարաբերությունների որոշակի ակտիվացումը հիմնականում բացատրում է հենց տարածաշրջանային անվտանգության նոր սպառնալիքների /«քրդական» և «շիական» գործոնների ակտիվացման/ ու Իրաքի անկախության և տարածքային ամբողջականության պահպանման նրանց ընդհանուր շահերի համատեքստում:

Մեծ կարևորություն է տրվել հատկապես 2003թ. սկսած իրաքյան ճգնաժամի ընթացքում Իրանի որդեգրած քաղաքական դիրքորոշման հիմնական առանձնահատկությունների լուսաբանմանը, ճգնաժամի տարբեր փուլերում Թեհրանի ռազմավարության մշակմանը:

Հեղինակն այն եզրահանգման է գալիս, որ թեև 2003թ. Իրաքում բաասական վարչակարգի տապալումը լիովին համապատասխանում էր տարածաշրջանում Թեհրանի քաղաքական-անվտանգության շահերին, որի արդյունքում Թեհրանն ազատվում էր տարածաշրջանում իր կրոնաքաղաքական ազդեցության մեծացման հիմնական խոչընդոտից և լայն հնարավորություններ էր ստանում իր «շիական» քաղաքականության ակտիվացման համար, սակայն մյուս կողմից ամերիկյան ռազմական ներկայությունն Իրաքում վտանգ էր պարունակում Բաղդադի՝ արաբական աշխարհում ԱՄՆ-ի հակաիրանյան քաղաքականության իրականացման հիմնական հենարանի վերածվելու առումով: Իրաքյան ճգնաժամի ընթացքում Իրանի քաղաքական ռազմավարության ընդհանուր վերլուծությունն վկայում էր, որ հետճգնաժամյան Իրաքի քաղաքական զարգացումներում իրաքյան շիա տարբեր խմբավորումների միջոցով Թեհրանի ակտիվ ներգրավումն ուղղակիորեն բխում էր Թեհրանի անվտանգության շահերի պահպանման անհրաժեշտությունից:

Երկրորդ ենթագլուխը՝ «Արաբական աշխարհում Իրանի ազդեցության մեծացման օբյեկտիվ նախադրյալները. Իրան-Սիրիա-Հզորլահ-Համաս առանցքի

ամրապնդումը», ատենախոսը փորձել է համակարգային և բազմակողմանի վերլուծության ենթարկել այն զարգացումները, որոնք 2005թ. սկսած հանգեցրին ոչ միայն Իրանի արաբական քաղաքականության կտրուկ ակտիվացմանն, այլև արաբական տարածաշրջանում Թեհրանի դիրքերի զգալի ամրապնդմանը:

Հեղինակի դիտարկմամբ այդ ամենն առաջին հերթին պայմանավորված էր իրաքյան զարգացումներով՝ հաշվի առնելով այն, որ 2005թ. սկսած հետադարձաբար Իրաքի քաղաքական կառուցվածքում շիաների դիրքերի զգալի ամրապնդումը լավ հիմքեր էր ստեղծում ոչ միայն Թեհրան-Բաղդադ քաղաքական, տնտեսական, մշակութային-կրոնական կապերի զարգացման, այլև Ծոցի արաբական երկրների, ինչպես նաև Լիբանանի շիա բնակչության ակտիվացման և մերձավորարևելյան քաղաքական զարգացումներում նրանց ակտիվ ներգրավվման համար, որն անշուշտ, իր հերթին էապես մեծացնում էր Իրանի արաբական ռազմավարության մեջ շիական գործոնի օգտագործման արդյունավետությունը:

Մյուս կարևոր գործոնը, հեղինակի կարծիքով, սիրիա-լիբանանա-պաղեստինյան ճակատում Թեհրանի դիրքերի ամրապնդումն էր, որը հատկապես դրսևորվեց 2005թ. սկսած Իրանի և Սիրիայի վրա իրականացվող միջազգային ուժեղ ճնշման, արտաքին քաղաքական ընդհանուր մարտահրավերների առկայության, ինչպես նաև լիբանանյան և պաղեստինա-իսրայելյան ճակատներում իրենց ուժերը համախմբելու սիրիա-իրանական քաղաքականության ակտիվացման պայմաններում:

Վերոնշյալ գործոններից բացի, հեղինակը կարևորում է նաև 2005թ. Իրանում Մ. Ահմադինեջադի իշխանության գալը և Իրանի տարածաշրջանային ռազմավարության մեջ «արաբական ուղղության» կտրուկ ակտիվացումը, որի արդյունքում ամրապնդվեցին արաբ-իսլամական արմատական դիմադրողական տարրեր ուժերի հետ Թեհրանի կապերը, ուրվագծվեցին արաբական երկրների նկատմամբ գաղափարական, ռազմաքաղաքական, գերակայության հասնելու միջոցով Իրանն իսլամական աշխարհի առաջատար դարձնելու իրանական ղեկավարության հավակնությունները:

Ատենախոսը գտնում է, որ 2005թ. սկսած արաբական աշխարհում Թեհրանի ազդեցության նման մեծացումն էր, որ առավել վճռական և հաստատական էր դարձնում ատոմային տեխնոլոգիաների զարգացման և երկրի ռազմականացման ուղղությամբ իրականացվող իրանական ղեկավարության քայլերը՝ լավ հնարավորություն տալով վերջինիս «արաբական» և «ատոմային» քաղաքականությունների փոխկապակցման միջոցով ուժեղացնել իր բանակցային դիրքերը Արևմուտքի հետ:

Սույն գլխի վերջին՝ երրորդ ենթազխում՝ *«Սաուդյան Արաբիան ու Եգիպտոսը որպես հակաիրանական արաբական առանցքի հիմնական ուժեր»*, ուսումնասիրվում են առաջատար սուննի արաբական երկրների՝ Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, ջանքերը իրաքյան, լիբանանյան և պաղեստինյան ճակատներում «իրանական» գործոնի ակտիվացումն ու «Իրան-Սիրիա-Հզբոլլահ-Համաս» առանցքի ամրապնդումը կանխելու ուղղությամբ: Կարևորություն է տրվել հատկապես արաբական աշխարհում գաղափարաքաղաքական պայքարի երանգավորում ստացած շիա-սուննի կրոնահամայնքային հակասությունների համատեքստում իրանա-սաուդյան հակամարտության հիմնական առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Ատենախոսը գտնում է, որ Թեհրանի և Էր-Ռիպալի միջև առկա գաղափարական, քաղաքական և կրոնահամայնքային տարածայնություններն էին, որ իրենց բացասական ներգործությունն էին թողնում Իրան-ՃՀԽ քաղաքական երկխոսության զարգացման վրա: Դրան նպաստում էին նաև Վաշինգտոն-ՃՀԽ քաղաքական և ռազմական կապերի ամրապնդումը, տարածաշրջանային անվտանգության

պահպանման խնդիրների շուրջ Իրան-ԾՀԽ տարածայնությունները, Ծոցի շրջանում շիական հակակառավարական տարբեր խմբավորումների հետ Թեհրանի սերտ կապերը և անշուշտ, դեռևս իր լուծումը չգտած կղզիների խնդիրը:

Սույն ենթագլխում ուսումնասիրվում են նաև արաբ-իրանական հարաբերությունների վրա ամերիկյան գործոնի ունեցած ազդեցությունը, ինչպես նաև վերջին տարիներին հակաիրանական արաբական ճակատ ստեղծելու Վաշինգտոնի քաղաքականության առանձնահատկությունները:

Հակադրվելով մի շարք արաբ և արևմտյան հետազոտողների տեսակետներին՝ հեղինակը գտնում է, որ ամերիկյան մերձավորարևելյան դիվանագիտությունը փորձում էր օգտագործել «իրանական սպառնալիքը»՝ արևմտամետ արաբական երկրների միջոցով հակաիրանական արաբական ճակատ ձևավորելու և իր հակաիրանական գործողություններն «օրինականացնելու» համար: Արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների սրման միջոցով Վաշինգտոնը նպատակ ուներ ոչ միայն Թեհրանին մեկուսացնել մերձավորարևելյան քաղաքական թաղաքայնություններից և թուլացնել արաբական արմատական ուժերի հետ Թեհրանի կապերը, այլև բարելավել արաբ-իրաքյան հարաբերությունները: Այնուամենայնիվ վերջին տարիներին իրանա-իրաքյան կապերի ակտիվացումը, սիրիա-իրանական առանցքի ամրապնդումը, լիբանանյան և պաղեստինյան քաղաքական զարգացումներում Հզրոյլախի և Համասի ազդեցության մեծացումը, ինչպես նաև թուրք-իրանական հարաբերությունների ակտիվացումը հեղինակի դիտարկմամբ էականորեն նվազեցնում էին մերձավորարևելյան զարգացումներից Թեհրանին մեկուսացնելու ԱՄՆ-ի հնարավորությունները:

Այսպիսով, 1979թ. սկսած մինչև 21-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների զարգացման հիմնական ուղղությունների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ հարաբերություններն անցել երեք տարբեր փուլեր, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր առանձնահատկություններն ու օրինակափոխությունները՝ անշուշտ մեծապես կրելով ինչպես ներքին /ներքաղաքական իրադրության փոփոխություններ/, այնպես էլ արտաքին /տարածաշրջանային և միջազգային իրադրության փոփոխություններ/ գործոնների ազդեցությունը: Այսպես, եթե 1980-ականներին արաբ-իրանական քաղաքական հարաբերություններն ամբողջովին կրում էին Իսլամական հեղափոխության, Խոմենիի մշակած կրոնազաղափարական և ռազմաքաղաքական հայեցակարգի և իրանա-իրաքյան պատերազմի ազդեցությունը, ապա Խոմենիի մահից հետո Իրանի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող վերաձևավորումները, 1990-ականների սկզբին արաբական աշխարհում տեղի ունեցած զարգացումները, ինչպես նաև միջազգային հարաբերությունների երկբևեռ համակարգի փլուզումը բոլորովին նոր դիրքություններ առաջ բերեցին արաբ-իրանական քաղաքական հարաբերություններում՝ հիմնականում կանխորոշելով դրանց հետագա ընթացքը ամբողջ 1990-ական թթ. ընթացքում: Իսկ արդեն 21-րդ դարի սկզբին Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունները, տարածաշրջանում «ամերիկյան գործոնի» կտրուկ ակտիվացումը, ինչպես նաև արաբական աշխարհում տեղի ունեցած ռազմաքաղաքական զարգացումները ոչ միայն էապես ձևափոխեցին մերձավորարևելյան տարածաշրջանի ռազմավարական նկարագիրը, այլև նոր տեղաշարժեր առաջ բերեցին արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների ամբողջ համակարգում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ ատենախոսը հանգում է հետևյալին.

• Իրանի Իսլամական Հեղափոխության արդյունքում հիմնովին ձևափոխման ենթարկվեց արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների ամբողջ համակարգը: Իրանի արտաքին քաղաքականության հիմքում դրված խոսքերի գաղափարաքաղաքական դրույթները հանգեցրեցին մերձավորարևելյան ռազմավարության նոր սկզբունքների մշակմանը և արաբ-իրանական հարաբերությունների նոր հայեցակարգի ձևավորմանը: Խոսքերի պանիսլամական գաղափարախոսությունն ու «համաշխարհային մահմեդական պետության» ստեղծման նրա մոտեցումները, ընդգծված պաղեստինամետ հայացքներն ուղղակիորեն նպաստեցին Իրանի տարածաշրջանային նոր քաղաքականության մեջ «արաբական» գործոնի կտրուկ ակտիվացմանը:

• Խոսքերի առաջ քաշած «իսլամական հեղափոխության արտահանման» հայեցակարգը, տարածաշրջանն իսլամականացնելու և արաբական աշխարհում հասարակության վերակառուցման «իրանական մոդելը» տարածելու Թեհրանի փորձերը, շիական գործոնի միջոցով արաբական քաղաքական գաղափարների վրա ներազդելու վերջինիս ձգտումները, պանարաբական գաղափարախոսությունը պանիսլամականով փոխարինելու և մահմեդական աշխարհի առաջնորդ դառնալու իրանական ղեկավարության բացահայտ հավակնությունները 1980-ականների ընթացքում լուրջ ճգնաժամ առաջացրին արաբ-իրանական հարաբերություններում:

• Եթե Ծոցի արաբական միապետություններն ու Եգիպտոսն Իրաքին դիտում էին որպես Իրանի շիա-իսլամական հավակնությունները զսպող հիմնական արաբական ուժ և իրանա-իրաքյան պատերազմի տարիներին ակտիվ ռազմաքաղաքական օժանդակություն էին ցուցաբերում Ս. Հոսեյնին, ապա Սիրիան 1980-ականներին ի հայտ եկավ որպես արաբական աշխարհում Իրանի գլխավոր քաղաքական դաշնակից՝ վերջինիս տալով Հարավային Լիբանանում ներգաղթի, այնտեղ իր գաղափարական և ռազմաքաղաքական ազդեցությունը տարածելու, ինչպես նաև արաբ-իրաքյան հակամարտության ընթացքի վրա ներազդելու կարևոր լծակներ:

• Հետպատերազմյա ժամանակաշրջանում և հատկապես 1990-1991թթ. իրաքա-քուվեյթյան ճգնաժամի պայմաններում Թեհրանի որդեգրած նոր արտաքին ռազմավարությունը, «իսլամական հեղափոխության արտահանման» գաղափարախոսությունից Թեհրանի զգալի հեռացումը, նախագահ Հ. Ռաֆիսանջանի որդեգրած առավել չափավոր և իրատեսական արաբական քաղաքականությունը նպաստեց արաբ-իրանական հարաբերությունների որոշակի բարելավմանը և արաբական աշխարհում Իրանի քաղաքական մեկուսացման նկատելի հաղթահարմանը:

• Ծոցի Երկրորդ ճգնաժամից հետո առնվազն մինչև 1997թ. Իրանում Ս. Խաթամիի իշխանության գալը արաբ-իրանական հարաբերություններում լարվածություն առաջացնող հիմնական գործոններն էին՝ տարածաշրջանային ավտանգության պահպանման և Ծոցում քաղաքական-անվտանգության համակարգի մշակման հարցում Իրանի և արաբական երկրների միջև առկա տարածայնությունները, ինչպես նաև 1992թ. բռնկված Աբու Մուսայի ճգնաժամը: Այս ժամանակահատվածում Իրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ տեղի ունեցավ նաև «արաբական գործոնի» կարևորության նվազում, կամ այլ կերպ ասած Իրանի արտաքին քաղաքականության «ապարաբականացում»:

• 1990-ականների կեսերից սիրիա-իրանական առանցքի ամրապնդումը, իրանա-եգիպտական հարաբերությունների որոշակի բարելավումը, և հատկապես իրանա-սաուդյան կապերի կտրուկ ակտիվացումը կապված էին հիմնականում 1996թ. սկսած մերձավորարևելյան խաղաղության գործընթացի ձախողման, տարածաշրջանում

թուրք-իսրայելական ռազմաքաղաքական առանցքի ամրապնդման և մասնավորապես, 1997թ. Իրանում Մ. Խաթամիի իշխանության գալու հետ:

- 21-րդ դարի սկզբի մերձավորարևելյան զարգացումները, մասնավորապես 2003թ. Իրաքյան ճգնաժամը /շիական գործոնի ակտիվացումը/ և հետագա տարիներին լիբանանյան և պաղեստինյան ճակատներում տեղի ունեցած ռազմաքաղաքական փոփոխությունները /Հզբոլլաի և Համասի դիրքերի ամրապնդումը/ նպաստավոր նախադրյալներ ստեղծեցին արաբական քաղաքական գործընթացներում Իրանի ակտիվ ներգրավվման համար:

- 2005թ. սկսած արաբ-իրանական քաղաքական հարաբերությունների վրա իր խիստ բացասական ազդեցությունն էր թողնում մի կողմից Իրանի ատոմային ծրագիրը և Իրանի մերձավորարևելյան քաղաքականության ակտիվացումը, իսկ մյուս կողմից Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հակաիրանական ռազմավարությունը, որն ուղղված էր մի կողմից արաբական աշխարհում իրանամենտ շիական առանցքի ձևավորումը կանխելու, իսկ մյուս կողմից Իրաքում, Լիբանանում և Պաղեստինում Իրանի ազդեցության լծակները սահմանափակելուն:

- Արաբ-իրանական հարաբերությունների վրա իր բացասական ազդեցությունն էր թողնում հատկապես Վաշինգտոնի քաղաքականությունը, որը խարսխված էր տարածաշրջանում հակաիրանական արաբական ճակատ ձևավորելու և արաբական քաղաքական զարգացումներից Իրանին մեկուսացնելու ռազմավարության վրա:

- Այս ամենին զուգահեռ վերջին տարիներին Իրանի արաբական քաղաքականության, ինչպես նաև արաբ-իրանական ճակատում տեղի ունեցող առանցքային զարգացումների համակարգային վերլուծությունն իր հերթին ցույց տվեց, որ միայն արաբ-իրանական հարաբերություններն ակտիվացնելու և խթանելու, Ծոցի քաղաքական-անվտանգության համակարգում Իրանի ռազմավարական շահերը հաշվի առնելու, նրան մերձավորարևելյան զարգացումներում, այդ թվում՝ արաբական աշխարհում անվտանգության պահպանման գործընթացներում ակտիվորեն ներառելու միջոցով հնարավոր կլինի հասնել տարածաշրջանային կայունության՝ խաղաղություն հաստատել Իրաքում, խուսափել Լիբանանի քաղաքական դաշտում պարբերաբար ստեղծվող քառսային իրավիճակներից, կայունացնել դրությունը պաղեստինյան շրջաններում, առաջընթաց ակնկալել մերձավորարևելյան բանակցային գործընթացում, թուլացնել շիա-սուննի կրոնահամայնքային հակամարտությունը արաբական աշխարհում և ընդհանրապես հասնել տարածաշրջանային մի շարք հակամարտությունների ամբողջական և համապարփակ կարգավորմանը:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները

1. Մանասյան Գ. Մ., Իրանի և Պարսից Շոցի երկրների փոխհարաբերությունները աշխարհաքաղաքական ներկա զարգացումների համատեքստում (փաստեր և զարգացման միտումներ), «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը» (Լ. Վալեսյանի ծննդյան 80-ամյակին և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), ԵՊՀ հրատ., 2011թ., էջ 84-93:
2. Մանասյան Գ. Մ., Իրանի «շիական» քաղաքականությունը հետաադամյան Իրաքի նկատմամբ: Նոր հնարավորություններ և նոր մարտահրավերներ, «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, 2011թ., էջ 143-150:
3. Մանասյան Գ. Մ., Սիրիա-իրանական դաշինքը 21-րդ դարի սկզբին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, (Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցած հանրապետական երիտասարդական գիտաժողովի նյութեր), Վանաձոր, 2011թ., էջ 25-36:
4. Մանասյան Գ. Մ., Շիական գործունը որպես կարևորագույն միջոց 1980-ականների սկզբին Իրանի «լիբանանյան» քաղաքականության իրականացման համար, Արաքագիտական ուսումնասիրություններ, (հոդվածների ժողովածու, հատոր «Ե»), ԵՊՀ, Երևան, 2011, էջ 59-68:

МАНАСЯН ДАВИД МАКСИМОВИЧ

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ АРАБО-ИРАНСКИХ
ПОЛИТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ ПОСЛЕ ИРАНСКОЙ ИСЛАМСКОЙ
РЕВОЛЮЦИИ ДО НАЧАЛА 21-ГО ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.

Защита состоится 27-го июня 2011 г., в 13.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4г.

Резюме

Работа посвящена изучению ключевых вопросов арабо-иранских взаимоотношений и выявлению основных особенностей и направлений развития арабской политики Ирана после Иранской Исламской Революции 1979г. до начала 21-го века. Учитывая многоаспектный характер арабо-иранских взаимоотношений (общественно-политических, экономических, религиозно-культурных и других), автор впервые в отечественном востоковедении сделал акцент на их всестороннее и системное изучение. Основной целью данной работы является выявление и изучение ключевых вопросов, которые в наибольшей степени повлияли на структуру, логику и на весь ход развития арабо-иранских взаимоотношений.

Системный подход к изучению вопроса - рассмотрение арабо-иранских отношений как целостной системы, позволяет более детально, всесторонне и по-новому оценить разработанную политику Тегерана в арабском мире и выявить произошедшие в ней структурные изменения и возможные направления развития.

Целью диссертационной работы является решение следующих задач:

-Изучить воздействие хомейнизма как новой религиозно-идейной системы на формирование и разработку внешнеполитической стратегии Ирана, на основе религиозно-идеологической концепции хомейнизма выявить проводимую Ираном новую арабскую политику, идеологическую основу этой политики и основные направления и методы ее осуществления. Показать роль «шиитского» фактора в стратегии Ирана в Арабском мире.

-Выявить закономерности формирования и развития арабо-иранских отношений в 1980-х гг., выяснить значение воздействия ирано-иракской войны на ход этих отношений. Показать особенности политики Ирана в Персидском Заливе в 1980-х гг., изучить отношения Тегерана с Саудовской Аравией и Египтом.

- Изучить суть сирийско-иранской оси в 1980-х гг., ключевые факторы, влияющие на создание союза, выявить ее место и роль в системе арабо-иранских отношений.

-Определить место «палестинского фактора» в идейно-политической концепции Ирана, выявить общие черты стратегии Тегерана по отношению к арабо-израильскому конфликту.

- Изучить особенности арабской политики послевоенного Ирана, показать политику Ирана в ходе второго кризиса Залива и ближневосточного мирного

процесса, в 1990-х гг., выявить основные факторы, влияющие на арабо-иранские отношения в послевоенные годы.

- Выявить суть арабской политики Ирана в контексте геополитических изменений в Ближнем Востоке в последнем десятилетии, показать ключевые факторы, влияющие на арабо-иранские отношения.

В первой и второй главах диссертации проанализированы особенности новой ближневосточной политики Тегерана после иранской революции, их роль в формировании новой концепции арабо-иранских взаимоотношений, воздействие ирано-иракской войны на всю систему этих отношений.

Пропалястинская позиция Ирана, основанная на идеях «исламской солидарности», а также антиизраильские и антизападные взгляды Хомейни, создали внешне благоприятные предпосылки для Ирана в плане развития взаимоотношений с арабскими странами-соседями. Однако выдвинутая Ираном военно-политическая концепция «экспорта иранской революции», стремление Ирана внедрить в странах Ближнего Востока «иранскую модель» реконструкции общества, попытки Хомейни воздействовать с помощью «шиитского» фактора на внутривосточное развитие арабских «суннитских» стран, а также, откровенные амбиции иранского руководства стать лидером мусульманского мира, привели к серьезным противоречиям в отношениях Ирана не только с Ираком, но и с ведущими арабскими странами – Саудовской Аравией и Египтом.

В период ирано-иракской войны в 1980-х гг. ведущие арабские страны, опасаясь угрозы «иранского исламизма» и охваченные панарабскими идеями, заняли четкую панирабскую позицию, Сирия оказалась единственной страной, проводившей проиранскую политику. Сирийско-иранская ось опиралась в основном на предотвращение военно-политических амбиций Ирака, создании регионального стратегического противовеса Израилю, проведение своей политической линии в Ливане, исходя из взаимовыгодных стратегических интересов.

Несмотря на то, что Ирану так и не удалось распространить революцию на Ирак и на шиитское население арабских стран Персидского Залива, Тегеран при содействии Дамаска смог сохранить свое идеологическое влияние в районах расселения шиитов в Южной Ливана. С поддержкой Дамаска и ливанской радикальной исламистской шиитской организации «Хезболлах» Тегеран получил важные рычаги воздействия на арабо-израильский конфликт, одновременно, наладив тесные связи с палестинскими радикальными силами.

Третья глава посвящена изучению ключевых вопросов развития арабо-иранских взаимоотношений послевоенного периода.

Тяжелая социально-экономическая ситуация в Иране в послевоенные годы, ослабление региональных позиций, международная политическая изоляция, неэффективность внешнеполитических концепций хомейнистского периода являются теми факторами, которые оказали большое влияние на кардинальные изменения в арабской политике Ирана.

В рамках данной главы изучены как политика Тегерана в период ирано-кувейтского кризиса 1990-1991-х гг. и в ходе ближневосточного переговорного процесса в начале 1990-х гг., так и основные факторы, отрицательно влияющие на ирано-арабские отношения в послекризисные годы.

Заметная активизация «иранской политики» арабских стран с конца 1990-х, по мнению автора, в основном обусловлена как региональными процессами (срыв арабо-израильских переговоров, укрепление турецко-израильской оси), так и

внутриполитическими изменениями в Иране (избрание президентом М.Хатами в 1997г.).

В последней главе система ирано-арабских отношений рассматривается в контексте новой ближневосточной политики США и геополитических тенденций и военно-политических изменений в арабском мире в начале 21-го века (иракский кризис, арабо-израильский конфликт и т.д.).

Вышеуказанные тенденции с одной стороны являются серьезными вызовами для Тегерана, а с другой – представляют широкие возможности для значительного расширения своего влияния в арабском мире. Этому способствуют как резкая активизация шиитского фактора в результате иракских событий, укрепление военно-политической оси Иран-Сирия-«Хезболлах»-«Хамас», так и проведение Ираном активной арабской политики.

В данной главе рассмотрены действия противостоящих Ирану основных арабских сил – Саудовской Аравии и Египта в Ираке, Ливане и Палестине, направленные на сокращение иранского влияния, а также выявлены главные цели и мотивации политики Вашингтона, проводимой в последние годы по формированию антииранского арабского фронта.

В работе были изучены основные тенденции развития ирано-арабских отношений последних лет и влияющие на них факторы, проанализированы рычаги влияния Ирана в разных арабских фронтах. Исходя из логики развития арабо-иранских отношений, сделан вывод, что, несмотря на усилия Вашингтона по изоляции Ирана в регионе, последний сохранит свою роль в арабском мире как фактор, во многом определяющий равновесие сил и региональную стабильность.

DAVID MANASYAN

THE MAIN TRENDS OF DEVELOPMENTS IN ARAB-IRANIAN RELATIONS
FROM THE IRANIAN ISLAMIC REVOLUTION TO THE BEGINNING OF THE 21ST
CENTURY

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of History in the Field of “World history” 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.00 on June 16, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan. av. Marshal Baghramyan, 24/4

Resume

This research discusses key issues of Arab-Iranian relations and reveals principal features and directions of Iranian politics in the Arab world since the Iranian Islamic Revolution in 1979 until the beginning of the 21st century. Taking into consideration different aspects of Arab-Iranian relations /social, political, economic, religious, cultural, etc./ the author is the first in domestic oriental studies to initiate and stress out comprehensive and systematic analysis of Arab-Iranian political relations. The main point of the research is to explore and analyze the key issues, which had constructive influence on the structure, logic and the development of Arab-Iranian relations.

Systematic approach makes it possible to analyze the issue more comprehensively and to look at the Arab-Iranian relations as a general system. It highlights the new policy in the Arab world worked out by Tehran and explores the occurred structural changes and main developments.

The main goal of the dissertation is the solution of following problems

- Σ To analyze the impact of religious-ideological system of Khomeinism on foreign political strategy of Iran, to reveal Iran’s new Arab policy and the ideological basis and the main directions and methods of realization of that policy on the basis of religious-political ideology of Khomeinism.
- Σ To reveal the conformities of formation and development of Arab-Iranian relations in the 1980s, to investigate the influence of Iran-Iraq war on that relations, to describe the main characteristics of Iran’s Persian Gulf Policy, and to analyze Tehran’s relations with Saudi Arabia and Egypt.
- Σ To reveal the nature of Syria-Iranian alliance in the 1980s, its role in the political system of Arab-Iranian relations, and the main factors influencing on the formation of that alliance.
- Σ To investigate the role of the Palestinian factor in Iran’s Middle East policy, and to reveal the position of Tehran in the Arab-Israeli conflict.
- Σ To analyze the main specialities of Arab-Iranian relations in 1990’s, to show Iran’s policy during The Second Gulf War and the Middle Eastern peace process, and to reveal the main factors affecting on Arab-Iranian relations in post-crisis years.
- Σ To investigate the main points of Iran’s Arab policy and the factors influencing on the developments of Arab-Iranian relations in the context of geopolitical changes in the Middle East during the last decade.

First two chapters of the dissertation analyze the main features of Iranian new Middle-Eastern politics after the revolution, its role in the formation of new conception and the influence of Iraq-Iranian war on the whole system of Arabic-Iranian relations.

Iranian position to Palestine based on the notions of Islamic solidarity, Anti-Israelian and anti-western views of Khomeini externally created positive premises for Iran to develop the relations with neighboring Arabic countries. However, the "Exporting Islamic Revolution" military-political conception, the motivation to Islamize Arabic countries and to spread the Iranian model of society reconstructing in the Middle East, the efforts of Khomeini to influence on the political developments in neighboring Sunni countries with the help of Shia factor and the explicit ambitions of Iranian authorities to become a leader in the Muslim world, created serious contradictions for Iran in regards to relations not only with Iraq, but also with other leading Arabic countries, such as Saudi Arabia and Egypt.

During the Iranian-Iraqi war in the 1980s the leading Arabic countries threatened by "Iranian Islamism" and captured by pan Arabic ideas, took a precise pro-Iraqi position. Syria was the only country to develop pro-Iranian politics. Syrian-Iranian relations were mostly directed to prevent military-political ambitions of Iraq, to create regional strategic counterbalance for Israel, to regulate its politics in Lebanon based on the mutual strategic interests.

Although Iran could not export its revolution on Iraq and on Shia population in the Arabic countries of the Persian Gulf, Tehran could maintain its ideological influence on Shias in the region of Southern Lebanon. With the help of Damask and Hezbollah, the radical islamic shiite group, Tehran achieved important leverages for influencing on Arab-Israel conflict and could frame tight relations with the Palestinian radical forces.

The third chapter analyzes the key developments of Arab-Iranian relations during the postwar period. The difficult social-economic situation in Iran, relatively weakened position in the region, political isolation by the international community, and inefficiency of external political conception of Khomeini period were the factors, which influenced on the fundamental changes in Iran's Arabic policy. This chapter explores both the politics of Tehran in the period of Kuwaiti Crisis in 1990-1991 and during the Middle Eastern peace-process in the beginning of 1990's, and the main factors that had their negative impact on Arab-Iranian relations in post crisis period.

The author considers that the obvious activation of Iranian politics in the Arabic countries is stimulated by regional developments (failure of Arab-Israeli negotiations, the tightening of Turkey-Israel axis) and internal political changes in Iran (M. Khatami became president in 1997).

The last chapter points out the Arab-Iranian relations in the context of the new middle-eastern politics of the US, geopolitical developments, and military-political changes in the Arabic world in the beginning of 21st century (Iraqi crisis, Arab-Israeli conflict, etc.)

These developments are serious challenges for Tehran on one hand. On the other hand they provide large opportunities to expand Iranian influence on the Arab world. Both the activation of Shia factor, tightening of military-political axis Iran-Syria-Hezbollah-Hamas /the radical sunni palestinian organization/, and the Iranian politics towards the Arab world also support strengthening of its position in the region.

This chapter also describes the factors, which are directed to weaken the Iranian influence, and explores the main motivations in politics that formed Anti-Iranian Arabic front by Washington in recent years.

Analyzing the tendencies of developing Arab-Iranian relations during the last years and the factors influencing it, exploring the leverages of impact in the hands of arabic countries,

the author concludes that even though Washington makes efforts to isolate Iran in the region, the latter will maintain its role in the Arab world and will assure balance of forces and stability in the region.